54. ԲԱԶՈՒԿ

Կէղնի, չէղնի մարդ մե, կնիկ մե, հեչ ավլադ թավլադ չունին։ Էդ կնիկ լէ սիրահարի տեր է։ Խրստու կհիվընդնա, ուր իրկան կըսե.

— Գնա Հնդա մաքի բի, ես ուտիմ օր սախնամ, թը չէ՝ կմեռնիմ։ Հնդա քաղաք մաքին շնով կիտան, քոմե շներ տար, ընձի առ մաքիմ, արի։

Էդ մարթ լէ խելքեն պակաս կէղնի։ Գելնա կքոմա շներն ու կէրթա։ Կէրթա ճամփախ, տեսնա օր քոմմըմ մարդ էնդհուց գիգան։

Կըսին.— Բաղուկ, իդա շներ ո՞ւր կտանիս։

Կըսե.— Իշթա, իմ կնիկ հիվանդ է, տանիմ շներ ծախիմ, առնիմ մաքի մե հ՝իգամ, մորթիմ, իմ կնիկ ուտե օր սախնա, թը չէ՝ կմեռնի։

Էդտեխ էդ մարդիկ կնահատիկին ընդրան, կըսին. «Դուն կնկան խափած իս, դարձիր էրթանք»։

Կդառնա գիգա, գիգա ուր տուն, հարի գիգա, կէղնի գիշեր։ Գիգա երթիքի վրեն, երթիք կբանա, կիշքե օր ուր կնիկ բռնի սիրահարներու ծեռ ու կխաղա, կըսե.

«Ցարըմ գեթմիշ Հալար շահրա։

Եթի սաթում օն բեշ փարա[1],
Հ՚իգա բարով, չիգա բարով,
Ես կխաղամ ջուխտակ յարով»։
Էդ մարդ լէ կբոռա երթիքեն, կըսե.
— Դուռ բաց, կնիկ։

Կնիկ կըսե.— Քոփակ շո՛ւն, էնի ո՞րն ա վըր երթիքին կբոռա։
Կըսե.— Չէ՞ օր ես քու իրիկն իմ։

Կըսե.— Իմ իրիկն հ՚ոդա չէ, գացեր է Հնդա քաղաք։
Կըսե.— Օր դու իմ իրիկն ես, քու անուներ ի՞նչ է։
Կըսե.— Էն օր բոստներ կէղնի։
Կըսե.— Կարթո՞լ է։
Կըսե.— Չէ։
Կըսե.— Բո՞ղ է։
Կըսե.— Չէ։

Կըսե.— Ջահնմվի ընդեն, քոփակ շուն, մկա ելա տես ի՞նչ կէնեմ քու գլոխ։ Կճանչնա օր թե ուր իրիկն է, ինք խստու ճանաչ չհանե, բոնի սիրահարներու ձեռք, կխաղա։

Էդ մարթն է կիշերով կընգնե էդ գեղի մեջ օր թը ուր անուն հարցու, կէրթա կպատի երթիքե մը։

Կելնան՝ կըսին.— Բաղուկ, հ՚որի՞ պատար զմեր երթիք։
Կըսե.— Իմ անուն մոռցեր իմ, իմ անուն կհարցում ծենե։
Կեսին.— Քու անուն Բաղուկ է։

Էդ մարթն է կելնի կըսե.— «Բաղուկ, Բաղուկ, Բաղուկ». Հարի գիգա ուր դուռ, շներ կթափին վրեն, փետմ էն շան, մեկ էն շան զանա, կմոռնա, էլման զուր անուն կմոռնա։

Գիգա դուռ, կըսե.— Կնիկ, աստծու սիրուն, դուռ բաց ես հ՚իգամ տուն, ես մեռա ցրտուն։

Կնիկ էլման կքֆրե, դուռ չբանա։ Կմնա հարի կլուսնա։ Մարթ դռան ծկեն կիշքե օր հանդե կնիկ զուր էրկու սիրահար քսպեց մեջ փեթկին։ Էդ մարթ լէ գիգա, փեթկի բերան կկալու, ու կթալա չվան, կնիկ լէ կքսպե փեթկի մեջ ու կշալկե։

Կշալկե ու կէրթա ուրիշ ախշարք։ Կէրթա, կտեսնա օր հանդե, մարթ մի շալկե կարաս մի ու վար կէնե։ Էդ կարսի մեջ լէ էդ մարթու կնիկն է ու էրկու հատ սիրահար վըր ուր կնկան։ Էղան

---

1 Ցարս գացեր է Հալեպ, շներ կծախե տասնուհինգ փարայի (Ս. Բ.)։

ընտեի։ վեց հոգի, իրեք ընդրա պառեկն է, իրեք լէ ընդրա պառեկն է։

Բազուկ կըսե.— Իմ դարդ քու դարդեն, քու դարդ լէ իմ դարդէն, արի էրթանք։

Ինիկ կշալկե զուր փեթակ, էն լէ կշալկե զուր կարաս ու կէրթան։ Կէրթան ճամփախ հնձեզ (տեսակ մը հավք) կփռնե, կդնե ուր ծոց ու կէրթան։ Կէրթան գեղ մը, ճաղճպնի տուն խոնախ կէղնին։

Կէրթան, ճաղճպան տուն չէղնի, կնիկ տուն կէղնի. էդ կնիկ չթորկեր օր էդ մարթիք մտնան ներս, կըսե.

— Հարի իմ մարդ հ'իգա տուն, նոր կթորկիմ։

Ուրանք կնստին պատի տակ։

Ճաղճպնի կնիկ լէ սիրահարի տեր կէղնի։ Բազուկ կտեսնա օր կնկա սիրահար առեր է խորոված, գաթա ու բաղի, բերեր է ճաղճպնի կնկան։ Բազուկ դինա թէ էտի հ'ուր ա դներ է։

Իրիկուն ճաղճպան գիգա տուն, կըսե.— Կնիկ, իդոնք ի՞նչ մարթ ին, նստուկ ին իգա տեխ, իդոնք խեղճ ին, հ'որի՞ չես թորկի ներս մտնին։

Կըսե.— Դու տուն չէր, էն ապով չթորկեցի։

Ճաղճպան գելնի դուրս, կըսե.— Ախպրտանք, ծեր շալակ իջուցեք, էկեք տուն, տաքցեք։

Կըսին.— Չէ, մեր շալակ մեր պառեկեն իսկի պիտի չիշնա։

Գելնան գիգան տուն, թոնդրա խեճ, ուրանց շալակ լէ ուրանց պառեկ։

Ճաղճպան կըսե.— Կնիկ, ելի հաց բեր էդրանց, անոթի են։

Ճաղճպնի կնիկ լէ գէլնի իրեք հատ գարե հաց կդնե ընդրանց հ'առեճ։

Ճաղճպան կըսե.— Կնիկ, ցամաք հաց է չկրնանք ուտինք։

Կնիկ կըսե.— Ի՞նչ էնիմ ցամաք հաց է. ի՞նչ կա, բան չկա դնիմ։

Կնիկ օր ըսեց.— «Ցամաք հաց է, բան չկա», Բազուկ հնձեզ դրեր էր հ'ընթի տակ, հրմլա ճխթեց, հնծեզ ճվաց։ Բազուկ զարկեց վըր հնծղա գլխուն, ըսեց.

— Հըշ կեցի, իդա դախ բան մըսի։

Ճաղճպան ըսեց.— Աստված սիրես, ի՞նչ է կըսե, օր խայիլ չես, թըխ ըսե։

Կըսե.— Վոլլա հանդե խորվուկ խազ մե, էրկու հատ գաթա ու շուշե մի բախի, դնուկ է իդա տեխ աշկունք, թըխ բերե ուտինք։

Ի՛դհաղ ճաղճպան ուր կնկա հետ կկռվի, կըսե.

— Ինչի՞ չբերիս ուտինք, ցամաք հաց կուտինք։

Կնիկն է կըսե.— Ես մոռցեր ինք, ես ի՞նչ գիտենք։ — Ջէ՞ որ խստու կընե, սիրահարն է բերե։

Դորես կբերին, կուտին։

Ճաղճպան կխարցու ուր կնկան.— Ըդ որ՞ն է բերի էգ ռա-խին, խորոված ու գաթեն։

Կըսե.— Քու քավորկին է բերի։

Իդոտկուն Բազուկ կխմե զրախին, կսարխոշնա, գելնա Գզարկե զփեթակ կկոտրի, իդոտկուն Բազուկ գելնի կզարկե զճաղճպնի սնդուկ կկոտրե, ճաղճպընի կնիկ լէ զուր սիրահար գրեր էր մեջ սնդկին. կկոտրին, զհ՛ըմեն գելնան դուրս։

Ճաղճպան, Բազուկն ու կարսի ջալկող կէղնին մեկ, կզար-կին զընդկան կըսպանին։

Բազուկ լէ ճաղճպնին կըսե.— Իսկի լալ մարթ չկա՞ մեջ ծեր գեղին։

Ճաղճպան կէրթա կառնե զէդ լալ, իգա։ Յոթ ջանդակ կպա-հին, զմեկ կդընին օրթալաղ, ըդոտկուն լալուն կըսին. «Էրկու չարեք գիտանք քըզի, օր էդա ջանդակ տանես, թալես ծով»։

Լալ լէ կշալկե ջանդակ, կտանե, կթալե ծով։ Հարի լալ կդառնա հ՛իգա, ջանդակմ լէ կդնին օրթալաղ, կըսին.—Ըդ իմա՞լ կթալիս ծով, օր կդառնա հ՛իգա։

Հարի էն մեկ կթալա, մեկ լէ կդառնա իգա, լալն է չգիտնա, զյոթ ջանդակ լէ կթալա ծով, կմնա մեկ ջանդակ, օր թե լալ կդառ-նա հ՛իգա, կըսին.

— Ի՞նչ խաղար կտանիս կթալիս, կդառնա հ՛իգա, շիտակ քու կուշտ ու բոլոր իշկե։

Լալն է, էդ մեկ ջանդակ կառնե, կթալե։ Աղոթրան կբացվի, կտեսնա օր մոլեն ծովու պռուկ դաստան կբռնե։ Լալ լէ կըսե. «Կա չկա՝ իդա է օր կելնի գիգա, կանի էրթամ ջիտակ բռնիմ, թալիմ ծովու մեջ»։ Կէրթա, կկանի մոլի ետև, կզարկի լանգե մը, զմոլին լէ գիտա ճրի հետ։

Հ՛ոնցկի գիգա տուն, կըսե.— Վոլլա, ես հըրի թալեցի, ես տեսա օր գելներ կփախներ, լանգե մե զարկի, տվի ճրի մեջ։

Աստուց պատավ իրեք խնձոր՝ մեկ ընձի, մեկ քըզի, մեկ լէ անգանջ ըրողներուն։